



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 15(406) «17» հունիսի 2020թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
372	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 84-Ն որոշումը. ....	3
373	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի N 451 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 89-Ն որոշումը...	7
374	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 90-Ն որոշումը.....	9
375	««Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 94-Ն որոշումը.....	10
376	««Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 95-Ն որոշումը.....	12
377	««Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմ» և «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկները վերակազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 96-Ն որոշումը.....	13
<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>		
378	«Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 113 հրամանը .....	15
379	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու	

	մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 91 հրամանը.....	16
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>	
380	ԱՀ գերագույն դատարանի քրեական գործ ԸԻԴ/0133/01/19 որոշումը .....	17

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2020թ.

N 84-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ւ մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Որոշման 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետ.

«1.1) Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին՝ «Կուսակցությունների մասին» օրենքին համապատասխան նյութական աջակցության համար «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 4 խմբի 2 դասի «01. Նյութական աջակցություն Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին» ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների (տարեկան 45,000.0 հազար դրամ) 2020 թվականի երկրորդ կիսամյակում ըստ առանձին կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների բաշխումը՝ համաձայն սույն որոշման N 5.1 հավելվածի (հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 2020 թվականի ընտրությունների արդյունքներով կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից հավաքված ձայների թվի մասին Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալները).»:

3. Որոշումը լրացնել N 5.1 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի մայիսի 27-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՄԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն  
ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամով)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ այդ թվում՝</b>	-	-	-	-
<b>01</b>			<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	(750.0)	(85,300.0)	(209,555.0)
	<b>1</b>		<b>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</b>	-	(750.0)	(800.0)	(955.0)
		1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	-	(750.0)	(800.0)	(955.0)
		03	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	(750.0)	(800.0)	(955.0)
			ԱՀ արդարադատության նախարարություն	-	(750.0)	(800.0)	(955.0)
	<b>3</b>		<b>Ընդհանուր բնույթի ծառայություններ</b>	-	-	(84,500.0)	(208,600.0)
		2	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	-	-	(84,000.0)	(208,000.0)
		03	Գյուղատնտեսության համատարած հաշվառում	-	-	(84,000.0)	(208,000.0)
			ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն	-	-	(84,000.0)	(208,000.0)
		3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	-	-	(500.0)	(600.0)
		02	Պաշտոնական տեղեկագրի հրատարակման ծախսեր	-	-	(500.0)	(600.0)
			ԱՀ արդարադատության նախարարություն	-	-	(500.0)	(600.0)
<b>04</b>			<b>ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	<b>285,000.0</b>	<b>285,000.0</b>	-
	<b>3</b>		<b>Վառելիք և էներգետիկա</b>	-	<b>250,000.0</b>	<b>250,000.0</b>	-
		5	Էլեկտրաէներգիա	-	250,000.0	250,000.0	-
		01	Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորում	-	250,000.0	250,000.0	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	250,000.0	250,000.0	-

	7		<b>Այլ բնագավառներ</b>	-	<b>35,000.0</b>	<b>35,000.0</b>	-
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	-	35,000.0	35,000.0	-
		01	Պատվիրակությունների ընդունելություններ	-	35,000.0	35,000.0	-
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	-	35,000.0	35,000.0	-
08			<b>ՀԱՆԳԻՄՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ</b>	-	<b>1,672.0</b>	<b>1,300.0</b>	<b>1,555.0</b>
	2		Մշակութային ծառայություններ	-	1,672.0	1,300.0	1,555.0
		4	Այլ մշակութային կազմակերպություններ	-	1,672.0	1,300.0	1,555.0
		01	Պետական աջակցություն «ԱՀ պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	1,672.0	1,300.0	1,555.0
			ԱՀ արդարադատության նախարարություն	-	1,672.0	1,300.0	1,555.0
11			<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՄՎՈՂ ԾԱԽՍԵՐ</b>	-	<b>(285,922.0)</b>	<b>(201,000.0)</b>	<b>208,000.0</b>
	1		<b>Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր</b>	-	<b>420,000.0</b>	<b>693,000.0</b>	208,000.0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	420,000.0	693,000.0	208,000.0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	420,000.0	693,000.0	208,000.0
			ԱՀ կառավարություն	-	420,000.0	693,000.0	208,000.0
	2		<b>Այլ ծախսեր</b>	-	<b>(705,922.0)</b>	<b>(894,000.0)</b>	-
		1	Այլ ծրագրեր	-	(705,922.0)	(894,000.0)	-
		02	Կապիտալ ներդրումներ	-	(705,922.0)	(894,000.0)	-
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	(705,922.0)	(894,000.0)	-

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
 ՕՐԵՆՔԻ «ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 3 ԵՎ ԱՎԵԼԻ ՏՈԿՈՍ ՁԱՅՆ  
 ՀԱՎԱՔԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ  
 ԿԻՍԱՍՅԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
 ԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 3 ԵՎ ԱՎԵԼԻ ՏՈԿՈՍ ՁԱՅՆ  
 ՀԱՎԱՔԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ**

(հազար դրամ)

	Կուսակցությունների անվանումը	Ինն ամիս	Տարի
1	«Ազատ Հայրենիք-ՔՄԴ» կուսակցությունների դաշինք	6819.0	11933.0
2	«Միասնական հայրենիք» կուսակցություն	4018.0	7031.0
3	Արցախի «Արդարություն» կուսակցություն	1333.0	2333.0
4	«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն	1081.0	1892.0
5	Արցախի Ժողովրդավարական Կուսակցություն	980.0	1715.0
6	«ՆՈՐ ԱՐՑԱԽ» կուսակցությունների դաշինք	769.0	1346.0
	<b>Ընդամենը</b>	<b>15000.0</b>	<b>26250.0</b>

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2020թ.

N 89-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 451 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի ««Զարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Արցախի ներդրումային հիմնադրամի վերակազմակերպելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 451 որոշմամբ հաստատված՝

1) N 1 հավելվածում՝

ա. 26-րդ կետի «5» թիվը փոխարինել «6» թվով,

բ. 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«27. Խորհուրդը գլխավորում է խորհրդի նախագահը, որն ի պաշտոնե Արցախի Հանրապետության Նախագահն է:».

2) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2020 թվականի հունիսի 17-ի N 89-Ն որոշման

«Հավելված 2  
ԼՂՀ կառավարության 2007թ.  
հոկտեմբերի 29-ի թիվ 451 որոշման

**Կ Ա Ձ Մ**  
**ԱՐՑԱՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՑԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ**  
**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արցախի Հանրապետության Նախագահ (Խորհրդի նախագահ)
2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար
3. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար
4. Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական
5. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
6. Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ:»:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

17 հունիսի 2020թ.

N 90-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ռ ր ո շ ու մ է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և աշխատողների թիվը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 1-ին կետի «508» և «435» թվերը փոխարինել «522» և «449» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2020թ.

N 94-Ն

ք. Ստեփանակերտ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 17-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ**։

1. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ առանձնացնելով «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, դրանում ընդգրկելով հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ)՝

- 1) Կազմակերպական, հսկողական և եկամուտների հաշվառման վարչություն
- 2) Օպերատիվ հետախուզության վարչություն
- 3) Խոշոր հարկ վճարողների վարչություն
- 4) Արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության վարչություն
- 5) Հարկային վարչարարության մեթոդաբանության և հարկ վճարողների իրազեկման բաժին
- 6) Հայցային աշխատանքների կազմակերպման բաժին
- 7) Համակարգչային ծրագրերի մշակման և սպասարկման բաժին
- 8) Կադրերի բաժին
- 9) Շահումյանի շրջանի հարկ վճարողների բաժին
- 10) Ստեփանակերտ քաղաքի հարկային տեսչություն
- 11) Ասկերանի շրջանի հարկային տեսչություն
- 12) Մարտակերտի շրջանի հարկային տեսչություն
- 13) Մարտունու շրջանի հարկային տեսչություն
- 14) Հադրութի շրջանի հարկային տեսչություն
- 15) Շուշիի շրջանի հարկային տեսչություն
- 16) Քաշաթաղի շրջանի հարկային տեսչություն:

2. Սահմանել, որ «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդն է՝ վերակազմակերպմանը համապատասխան:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սահմանված կարգով Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ.

1) մեկշաբաթյա ժամկետում պետական կառավարչական հիմնարկների կանոնադրությունը, կառուցվածքը, գույքի կազմն ու չափը հաստատելու վերաբերյալ.

2) սույն որոշմամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

17 հունիսի 2020թ.

N 95-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ  
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 17-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո ղ ու մ է**.

1. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ առանձնացնելով «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, դրանում ընդգրկելով անշարժ գույքի կադաստրի վարչությունը, պետական գույքի կառավարման վարչությունը, գեոդեզիայի և հողային պետական տեսչությունը (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ):

2. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին ու Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել համապատասխանաբար Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության ու Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունները և աշխատակազմերի կառուցվածքը հաստատելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը՝ մեկշաբաթյա ժամկետում, աշխատակազմերին ամրացվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը՝ մեկամսյա ժամկետում:

3. Մահմանել, որ «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հանդիսանում է «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ վերակազմակերպմանը համապատասխանող բնագավառի իրավահաջորդը:

4. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ վերաբաշխումներ կատարել Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում՝ մեկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2020թ.

N 96-Ն

ք. Ստեփանակերտ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ԵՎ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ  
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 17-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**.

1. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնել մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բաժինը, ժամանակակից արվեստի և մշակութային կրթության բաժինը, միջոցառումների կազմակերպման և արտաքին կապերի բաժինը, ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը, զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության պատմամշակութային հուշարձանների բաժինը (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ) և դրանք միացնել «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

2. Վերակազմակերպել «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը՝ դրանից առանձնացնել սպորտի վարչությունը, (հաստիքներով և աշխատակիցներով հանդերձ) և այն միացնել «Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

3. «Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի:

4. «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանել «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի:

5. Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարին ու Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարին՝ Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել համապատասխանաբար Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարության ու Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի

նախարարության կանոնադրությունները և աշխատակազմերի կառուցվածքը հաստատելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը՝ մեկշաբաթյա ժամկետում, նախարարությունների աշխատակազմերին ամրացվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը՝ մեկամսյա ժամկետում:

6. Մահմանել, որ սույն որոշմամբ վերակազմակերպված պետական կառավարչական հիմնարկները հանդիսանում են միմյանց՝ վերակազմակերպմանը համապատասխանող բնագավառի իրավահաջորդը:

7. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ վերաբաշխումներ կատարել Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում՝ մեկամսյա ժամկետում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԲՈՒՑՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի N 04 եզրակացությունը և «ԱԳՐՈՄԱՐՔԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի մայիսի 22-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Բավարարել «ԱԳՐՈՄԱՐՔԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

**Աշոտ Բախշյան**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«16» հունիսի 2020թ.

N 91

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ  
ԱՎՏՈՍՈՒԲԻԼԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի N 358-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Դադարեցնել՝**

**1) անհատ ձեռնարկատեր՝ Արտիկ Վլադիմիրի Շահրամանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00267 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

**2) անհատ ձեռնարկատեր՝ Կարո Ալեքսանդրի Ազրյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SON00421 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

**2.** Ենթոյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում քրեական գործ ԸԻԴ /0133/01/19  
Քրեական գործ ԸԻԴ /0133/01/19  
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան  
Դատավորներ՝ Մ.Ավանեսյան  
Ռ.Զհանգիրյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ 05-ին հունիսի 2020թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝  
Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր	Ի.Կարապետյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Կ.Ղարայանի
	Ա.Աբրահամյանի
	Գ.Գրիգորյանի
	Հ.Խաչատրյանի

քարտուղարությամբ՝	Ի.Արզումանյանի
մասնակցությամբ՝ մեղադրող	Ի.Ալավերդյանի
պաշտպան՝	Ա.Մկրտումյանի
տուժողի իրավահաջորդ՝	Ժ.Բաղայանի
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝	Ա.Մաղաթյանի

դրնբաց դատական նիստում քննելով ըստ մեղադրանքի Արսեն Զավենի  
Գևորգյանի՝ նախատեսված ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին  
մասով, ԸԻԴ/0133/01/19 քրեական գործով Արցախի Հանրապետության  
վերաքննիչ դատարանի 2020թ. ապրիլի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ  
Արսեն Գևորգյանի պաշտպան Ատլեն Մկրտումյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

ԱՀ ոստիկանության քննչական կոմիտեի տարածքային քննչական  
վարչության երրորդ քննչական բաժնի ավագ քննիչ (այսուհետ, նաև՝  
նախաքննության մարմին) Վ.Ավանեսյանի 2019թ. սեպտեմբերի 12-ի  
որոշմամբ հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 211014/19 քրեական գործը՝  
ԼՂՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված  
հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2019թ. սեպտեմբերի 12-ի որոշումներով  
Արմեն Հայկազի Հակոբյանը քրեական գործով ճանաչվել է տուժող, իսկ նրա  
կին (այրի) Ժանետա Աշոտի Բաղայանը՝ տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի 2019թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ  
քրեական գործը ԼՂՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասից  
վերաորակվել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2019թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ Արսեն  
Զավենի Գևորգյանը սույն քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ,  
և նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի  
1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2019թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ մեղադրյալ Արսեն Ջավենի Գևորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն է հարուցվել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ, նաև՝ Դատարան):

Դատարանի 2019թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը մերժվել է:

Նախաքննության մարմնի 2019թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ մեղադրյալ Արսեն Ջավենի Գևորգյանի նկատմամբ ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Նախաքննության մարմնի 2019թ. նոյեմբերի 08-ի որոշմամբ միջնորդություն է հարուցվել հսկողություն իրականացնող դատախազին՝ քրեական գործի նախաքննության ժամկետը երկու ամսով՝ մինչև 2020թ. հունվարի 12-ը երկարացնելու վերաբերյալ:

Դատախազի 2019թ. նոյեմբերի 08-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է:

Քրեական գործով մեղադրական եզրակացությունը կազմվել է 2019թ. դեկտեմբերի 27-ին ԱՀ Բերձոր քաղաքում և այն հսկող դատախազի կողմից հաստատվել է 2019թ. դեկտեմբերի 30-ին:

Քրեական գործը մուտքագրվել է Դատարան 2019թ. դեկտեմբերի 30-ին:

Դատարանի 2019թ. դեկտեմբերի 30-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ, իսկ 2020թ. հունվարի 14-ի որոշմամբ՝ նշանակվել դատական քննության:

Դատարանի 2020թ. փետրվարի 03-ի դատավճռով Արսեն Ջավենի Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել պատիժ՝ ազատազրկում 2 (երկու) տարի ժամկետով: Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ Արսեն Ջավենի Գևորգյանի նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով: Արսեն Ջավենի Գևորգյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Արսեն Ջավենի Գևորգյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ԱՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչության վրա:

Նշված դատավճռի դեմ 2020թ. փետրվարի 27-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել տուժող Արմեն Հակոբյանի իրավահաջորդ Ժանետա Բաղայանի ներկայացուցիչ Արտյուշյա Մադաթյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020թ. ապրիլի 13-ի որոշմամբ՝ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Ըստ մեղադրանքի Արսեն Ջավենի Գևորգյանի ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ԸԲԴ/0133/01/19 քրեական գործով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2020թ. փետրվարի 03-ի դատավճիռը մասնակիորեն՝ պատժի մասով, բեկանվել և փոփոխվել է: Արսեն Ջավենի Գևորգյանի նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 1 (մեկ) տարի ժամկետով: Որոշվել է պատժի կրման սկիզբը հաշվել նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից: Դատավճիռը չբեկանված մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ 2020թ. մայիսի 04-ին ամբաստանյալ Արսեն Գևորգյանի պաշտպան Ատլեն Մկրտումյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

2020թ. հունիսի 02-ին վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

1/ Դատարանը, արագացված դատաքննության կարգով քննելով քրեական գործը, 2020թ. փետրվարի 03-ի դատավճռով Արսեն Զավենի Գևորգյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2019թ. սեպտեմբերի 11-ին ժամը 16:00-ի սահմաններում, ԱՀ Քաշաթաղի շրջանի Վաղազին համայնքին հարակից «Մեղվաքանդ» կոչվող տարածքում, իր ձեռքին ունենալով Արսեն Հայկազի Հակոբյանի կողմից ապօրինի օգտագործվող 4808 B համարի 16 մմ տրամաչափի մեկփողանի որսորդական հրացանը և գործելով անփութությամբ՝ կրակոց է արձակել վերջինիս ուղղությամբ և անզուշույթյամբ մահ պատճառել նրան:

2/ Տուժող Արսեն Հակոբյանի իրավահաջորդ Ժանետա Բադայանի ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ԱՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2020 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի փետրվարի 03-ի դատավճիռը մասնակիորեն՝ պատժի մասով բեկանել և փոփոխել, Արսեն Գևորգյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը բեկանել և փոփոխել ու նշանակել պատիժ ազատազրկում 1 /մեկ/ տարի ժամկետով:

## **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերը, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով բերելով բողոքը, նշել է, որ ստորադաս դատարանը խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 4-րդ, 10-րդ, 47-րդ, 59-րդ և 69-րդ հոդվածների պահանջները:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը քրեական գործով Արսեն Զավենի Գևորգյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել, իսկ որպես մեղմացնող հանգամանքներ արձանագրել է՝ Արսեն Գևորգյանի երիտասարդ տարիքը, նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չլինելը, բնակության վայրից դրականորեն բնութագրվելը, ընտանիքի միակ կերակրողը լինելը, մեղսագրվող արարքի նկատմամբ սահմանափակ մեղսունակ ճանաչված լինելը, առաջին անգամ պատահական զուգորդմամբ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելը, վարույթն իրականացնող մարմիններին խոստովանական բացատրություններով և ցուցմունքներով հանցագործության բացահայտելուն աջակցելը, հանցագործությունից անմիջապես հետո տուժողին օգնություն ցույց տալու փորձը, իրեն լիովին մեղավոր ճանաչելը և կատարած հանցանքի համար զղջալը ու դատաքննության արագացված կարգի մասին միջնորդություն ներկայացնելը:

Բողոքաբերը նշել է, որ նշված հանցագործության կատարումից մինչև օրս ամբաստանյալը քրեական օրենսգրքով չթույլատրվող ոչ մի արարք չի կատարել, և մեղադրանքի կողմը միջնորդել է դատարանին Արսեն Գևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառել: ԱՀ վերաքննիչ դատարանը հաշվի չի առել իր պաշտպանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքները, մինչդեռ դրանք լիովին բավարար են իր պաշտպանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար, քանի որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կիրառելու համար հանցագործությունների տեսակը որևէ կերպ չի

սահմանափակվում և այն կիրառելը սահմանափակված չէ հանցավորի արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով:

Ամբաստանյալ Արսեն Գևորգյանի պաշտպան Ատլեն Մկրտումյանը խնդրել է բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի ԸԻԴ/0133/01/20 քրեական գործով 2020թ. ապրիլի 13-ի որոշումը, փոփոխել այն՝ կայացնելով նոր դատական ակտ՝ կիրառելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջները՝ Արսեն Գևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

### **3.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշվում է, որ տուժողի իրավահաջորդը համոզված է, որ սույն գործով դատարանը ուներ բոլոր հիմքերը մերժելու արագացված դատաքննության մասին ամբաստանյալի միջնորդությունը, քանի որ գործում առկա են բազմաթիվ հակասություններ ու չպարզված հանգամանքներ, որոնց ճշտումը կարող էր էական նշանակություն ունենալ գործի էլքի վրա, ուղղակի տուժողի իրավահաջորդը՝ հաշվի առնելով արագացված դատաքննության արդյունքում օրենքով սահմանված բողոքարկման կարգը, վերաքննիչ բողոք է ներկայացրել միայն պատժի մասով, չհամոզված լինելով, որ իր ամուսինը զոհվել է ամբաստանյալի կողմից արված պատահական կրակոցի արդյունքում, ուստի խնդրում է մերժել վճռաբեկ բողոքը:

### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Սույն գործով Գերագույն դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ա.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և ազատագրկման ձևով պատիժ նշանակելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա

կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»:

Վերոնշյալ իրավադրույթը Գերագույն դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Գերագույն դատարանը բազմիցս փաստել է, որ թեև, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված, ԼՂՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն:

ԼՂՀ քրեական օրենսգրքի՝ «Անզուգուշությամբ մահ պատճառելը» վերտառությամբ 108-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անզուգուշությամբ մահ պատճառելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Վերը շարադրվածի լույսի ներքո Գերագույն դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանցագործության համար պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է իրենց ամբողջության մեջ վերլուծեն և համապարփակ գնահատման ենթարկեն սույն հանցակազմի բնույթը, ինչպես նաև վերջինիս հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս, հանցավոր արարքի ու հանցավորի անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնների համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ գնահատման հիման վրա է միայն հնարավոր ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին, հետևաբար նաև նշանակել համաչափ պատիժ և լուծել պատիժը կրելու նպատակահարմարության հարցը:

Սույն գործի նյութերից երևում է, որ Արսեն Զավենի Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2019թ. սեպտեմբերի 11-ին ժամը 16:00-ի սահմաններում, ԱՀ Քաշաթաղի շրջանի Վաղագին համայնքին հարակից «Մեղվաքանդ» կոչվող տարածքում, իր ձեռքին ունենալով Արմեն Հայկազի Հակոբյանի կողմից ապօրինի օգտագործվող 4808 B համարի 16 մմ տրամաչափի մեկփողանի որսորդական հրացանը և գործելով անփութությամբ՝ կրակոց է արձակել վերջինիս ուղղությամբ և անզուգուշությամբ մահ պատճառել նրան:

Գնահատելով կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, Ա.Գևորգյանի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքի բացակայության փաստը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ա.Գևորգյանի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը նրա կողմից կրելու՝ ԱՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի դրույթների կիրառման միջոցով:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, տուժող կողմի բողոքի հիման վրա քննելով գործը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի հետ, նշել է, որ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները չեն վկայում այն հասարակական վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Արսեն Գևորգյանի անձին և նրա կատարած հանցանքին: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի և նրա կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն հանդիսանում, քանի որ վերը նշված վերլուծությունների ներքո քննարկելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի դրույթներն ամբաստանյալ Արսեն Գևորգյանի նկատմամբ կիրառելու հնարավորության հարցը, Վերաքննիչ դատարանը արձանագրել է, որ դատարանի մոտ օբյեկտիվորեն չի կարող ձևավորվել այն համոզվածությունը, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է նրա նկատմամբ վերոհիշյալ հոդվածի դրույթները կիրառելու պայմաններում:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ սույն գործի օբյեկտիվ տվյալները, կատարված հանցավոր արարքի բնույթը, հանցագործությունը կատարելու ընթացքում ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, նրա անձը բնութագրող տվյալների համակցությունը ... բերում են այն համոզմունքին, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի դրույթները նրա նկատմամբ կիրառելի չեն, և կիրառելու դեպքում հնարավոր չի լինի հասնելու նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նպատակներին, այդ թվում վերականգնել սոցիալական արդարությունը:

Վերը նշված փաստական հանգամանքները գնահատելով, Գերագույն դատարանը գտնում է, որ Ա.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատման է ենթարկել ոչ միայն ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, այլ նաև կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը ու եկել այն եզրահանգմանը, որ թեև Դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ լինելու պատճառով, որը չի համապատասխանում հանցագործության ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին ու հանցավորի անձին, ուստի, ղեկավարվելով ՔԴՕ 413-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 417-րդ հոդվածի 1-ին մասով և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ այն մեղմացրել է՝ նշանակելով նրան մեղսագրված արարքի սանկցիայով սահմանված նվազագույնին մոտ պատիժ՝ ազատազրկում 1 /մեկ/ տարի ժամկետով, մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանն իրավացի գտել է, որ ամբաստանյալն այն պետք է կրի ռեալ:

Գերագույն դատարանը գտնում է, որ նշված փաստական հանգամանքների առկայության պայմաններում Առաջին ատյանի դատարանը համակողմանի գնահատման չի ենթարկել սույն գործի բոլոր հանգամանքները ու կատարված հանցանքի վտանգավորության աստիճանը: Արդյունքում, հիմք ընդունելով միայն ամբաստանյալի առողջական վատթար վիճակը, նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ առանց մատնանշելու որևէ փաստական հանգամանք, որը, նվազեցնելով կատարված հանցանքի հանրային վտանգավորության

աստիճանը, հնարավորություն կտար եզրահանգելու, որ տվյալ պարագայում արդարացված կլինի նշանակված պատիժը Ա.Գևորգյանի կողմից պայմանականորեն չկրելը:

Իսկ ինչ վերաբերում է Ա.Գևորգյանի առողջական վատթար վիճակին, ապա Վերաքննիչ դատարանը ճիշտ է եզրահանգել, որ այն հակացուցված չէ ամբաստանյալին ազատազրկման վայրում տեղավորելու ու հոգեբույժի հսկողության ներքո գտնվելու հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հավասարապես հաշվի են առնվել նաև ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և նրա անձը բնութագրող հանգամանքները, ուստի գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս Վերաքննիչ դատարանը, համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ պատշաճ գնահատման ենթարկելով սույն գործի փաստական տվյալները, ամբաստանյալին մեղսագրված արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, նրա պատասխանատվությունը ու պատիժը մեղմացնող, անձը բնութագրող հանգամանքները, եկել է հիմնավորված հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժ կրելու, այսինքն նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին: Այլ կերպ՝ ամբաստանյալ Ա.Գևորգյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր են, իսկ վճռաբեկ բողոքի փաստարկներն անհիմն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում թույլ չի տվել ու կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, հետևաբար հիմքեր չկան այն բեկանելու կամ փոփոխելու համար: Ուստի պաշտպան Ա.Մկրտումյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2020թ. ապրիլի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով շարադրված պատճառաբանություններից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-րդ և 440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Արսեն Զավենի Գևորգյանի վերաբերյալ ԱՀ վերաքննիչ դատարանի 2020 թվականի ապրիլի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Կ.ՂԱՐԱՅԱՆ  
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**